

---

---

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ-ՌԵՄՈՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ. Հայոց ցեղասպանությունը. ամբողջական պատմություն, *Կահիրե, 2015, 1328 էջ:*  
ريمون كيفوركيان. ابادة الارمن. القاهرة. 2015. ص 1328

*Կահիրեի ՀԲԸՄ “Մաթենիկ Չաքրը” հիմնադրամի հրատարակչությունը լույս է բերում ֆրանսիական պատմաբան, Սորբոնի համալսարանի դասախոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, դոկտոր Հարություն-Ռեմոն Գևորգյանի “Իրադարձ արևմտյան” (“Հայոց ցեղասպանությունը”) կոթողային աշխատության արաբերեն թարգմանությունը՝ 1328 էջ ծավալով: Մենագրությունը ֆրանսերեն լեզվով առաջին անգամ լույս է տեսել 2005 թ. և մինչ օրս թարգմանվել ու վերահրատարակվել է չորս լեզուներով՝ անգլերեն (2009 թ.), գերմաներեն (2015 թ.), ռուսերեն (2015 թ.) և արաբերեն: Թեև գիրքը թվագրված է 2015 թ., սակայն այն լույս է տեսել 2016 թ. ապրիլին: Գրքի արաբերեն հրատարակությունն իրականացվել է անգլերեն հրատարակությունից. արաբերեն թարգմանությունը կատարել է եգիպտացի թարգմանչուհի Սահար Թաուֆիքը, ով հայկական պատմական թեմաներով մի քանի գրքերի թարգմանիչ է: Արաբերեն հրատարակությունը վերանայել, խմբագրել և անվանացանկը կազմել է երևանաբնակ լիբանանահայ պատմաբան պ. գ. թ. Գևորգ Յազարճյանը: Հատորն էջադրել է երևանաբնակ իրանահայ Խաչիկ Նազար Պարզիգարը: Հրատարակչական բոլոր աշխատանքները համակարգել է Կահիրեի ՀԲԸՄ նախագահ (ներկայումս՝ պատվո նախագահ) պարոն Պերճ Թերգյանը: Փաստորեն, այս հրատարակությանն իրենց մասնակցությունն են բերել սփյուռքահայ չորս տարբեր համայնքների ներկայացուցիչներ:*

*Հրատարակությունը բաղկացած է Պ. Թերգյանի նախաբանից, հեղինակի առաջաբանից, 6 բաժնից՝ համապատասխան ենթաբաժիններից, վերջաբանից ու անվանացանկից: Յուրաքանչյուր բաժնի վերջում տրվում են աղբյուրագիտական և այլ ծանոթագրություններ: Որոշ տեղերում թարգմանիչն ու խմբագիրը էջատակի ծանոթագրություններով հավելյալ բացատրություններ են ներկայացնում ընթերցողին:*

*Գրքում հեղինակը ներկայացնում է Հայոց ցեղասպանության գաղափարախոսական և աշխարհաքաղաքական նախադրյալները, ցեղասպանության տարբեր փուլերը՝ աբդուլհամիդյան ջարդերից անցում կատարելով Կիլիկիայի ու Հալեպի նահանգի արևմտյան մասի հայաբնակ շրջանների 1909 թ. ապրիլյան կոտորածներին, սպա, հատկապես, կենտրոնանալով Մեծ եղեռնի տարիներին տեղի ունեցած տեղահանությունների և վայրագությունների վրա:*

*Աղբյուրագիտական հարուստ հենքի օգտագործմամբ, որոշ դեպքերում՝ նույնիսկ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դնելով նոր սկզբնաղբյուրներ, դոկ-*

տոր Գևորգյանը նահանգ առ նահանգ մանրամասն ներկայացնում է հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության ամբողջական պատմությունը: Նա Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությունը հասցնում է մինչև 1923 թ. արդի Թուրքիայում քեմալական վարչակարգի հաստատումը: Աշխատության մեջ առաջին անգամ լայնորեն օգտագործվել են Երուսաղեմի պատրիարքության արխիվում պահվող 1919–1920 թթ. օսմանյան ռազմական դատարանների արձանագրությունների վավերացված պատճենները:

Աշխատանքի վերջում հեղինակը եզրակացնում է, որ քեմալական Թուրքիան երիտթուրքական Օսմանյան կայսրության օրգանական շարունակությունն է, թեև նշում է, որ Քեմալը երիտթուրք շատ դեկավարների կա՛մ ֆիզիկապես վերացրեց Բզմիրի 1926 թ. դավադրությունը կազմակերպելու պատրվակով, կա՛մ նրանց քաղաքական ազդեցությունը չեզոքացրեց, իսկ մեծ մասին իրեն ենթարկեց ու ծառայեցրեց՝ իր իշխանության ամրապնդման նպատակով:

92 էջ կազմող անվանացանկը թեև ամբողջական չէ, սակայն ընթերցողի և ուսումնասիրողի համար կարևոր օժանդակ ուղեցույց է, որն օգնում է կողմնորոշվել փնտրված անձանուները, տեղանուները, պարբերականների անունները, պետական, զինվորական, կրթական ու այլ մարմիններին կամ կառույցներին վերաբերող նյութերն ավելի արագ գտնելու հարցում: Այդ ցանկում հաճախ մի քանի բառով մանրամասնվել են տվյալ անհատի ինքնությունը կամ տեղանվան գտնվելու վայրը: Այսպես, 1292-րդ էջում նշվել են երեք Կադրի բեյեր՝ Ադանայի ժանդարմերիայի պետ, Արաբկիրի ժանդարմերիայի պետ և Բալուի գավառապետ, որոնք տարբեր անձեր են: Այսպիսի նույնանուն անձերը հանդիպում են գրքի տարբեր հատվածներում, իսկ դրանց տարբերակումն առարկայացանկում կարևոր է ուսումնասիրողների համար: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մինչև 1930-ականները թուրքերն ազգանուն չեն ունեցել՝ նման մանրամասնումն ունի խիստ կարևոր նշանակություն:

Արաբերեն հատորի դրական կողմերից մեկն էլ այն է, որ հայերեն ազգանունների և տեղանունների պարագայում, գրեթե միշտ, առաջին հիշատակման դեպքում, երբեմն էլ՝ մի քանի հարյուր էջ հետո նորից հանդիպելու դեպքում, արաբերեն անվան կողքին բերվում է նաև տվյալ անվան լատինատառը՝ տարընթերցումներից խուսափելու համար: Նաև հաճախ գործածվել են արաբերենի հարաքայթները (ձայնավորները)՝ նման թյուրբմբոնումներից խուսափելու և նյութն արաբ ընթերցողին ավելի ընկալելի դարձնելու համար: Օգտագործվել են նաև պարսկերենում առկա արաբական այբուբենի ավելացված մի քանի տառեր՝ արտահայտելու համար հայերենի ժ, գ, պ հնչյունները, որոնք բացակայում են արաբերենում:

Աշխատանքի թարգմանության բարդությունը պատկերացնելու համար նշենք, որ, մասնավորապես, ծանոթագրություններում գործածվել է երկու գրելաձև (արաբերենը՝ աջից ձախ, այլ լեզուները՝ ձախից աջ), երեք այբուբեն (արաբական, լատինական՝

իր որոշ հավելումներով, հայկական) և յոթը լեզու (արաբերեն, հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, թուրքերեն, գերմաներեն և լատինատառ ռուսերեն):

Դոկտոր Հարություն-Ռեմոն Գևորգյանի «Հայոց Ցեղասպանությունը. ամբողջական պատմություն» աշխատության արաբերեն թարգմանությունը կարևոր աշխատանք է, որի նպատակն է արաբական գիտական, լրատվական, քաղաքական շրջանակներին, սկզբնաղբյուրների լայն օգտագործմամբ, ներկայացնել հայ-թուրքական հակամարտության էությունը: Մենագրությունն այս առումով արդեն իսկ զգալի դեր է խաղացել Եզիպտոսի խորհրդարանում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման շուրջ ծավալված քննարկումներում:

Աշխատանքը կշահեր, եթե նրանում տեղ գտներ նաև օգտագործված աղբյուրների համախումբ ցանկը, թեև հասկանալի է, որ այն էլ ավելի կմեծացներ հատորի ծավալը: Ի դեպ, դա բացակայում է նաև մյուս լեզուներով հրատարակություններում:

Ինչպես և այսպիսի լայնածավալ այլ ուսումնասիրություններում, այս աշխատանքում էլ առկա են որոշ բացթողումներ ու թերություններ: Մասնավորապես, մի շարք էջերում շփոթվել են Կ. Պոլսի հայոց երեսփոխանական ժողովի և օսմանյան մեջլիսի՝ հայ անդամները. երկուսի համար էլ օգտագործվել է պատգամավոր (արաբերեն՝ նաիր) բառը, մինչդեռ կարելի էր շփոթ չառաջացնելու համար այս երկու մարմինների անդամների համար տարբերակող բնորոշումներ գործածել: Գրքում չափազանց քիչ են օգտագործված հայաստանյան աղբյուրներն ու հայաստանցի հեղինակները: Դրանք չեն գերազանցում օգտագործված աղբյուրների նույնիսկ 5 տոկոսը: Ամբողջովին անտեսվել են ՀՀ գիտական կենտրոններում՝ մասնավորապես, Հայաստանի Ազգային արխիվում և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում պահվող բազմահազար նյութերը, որոնք ևս հարուստ տեղեկություններ են հաղորդում թեմայի մասին:

Հաշվի առնելով աշխատանքի մեծածավալ լինելու հանգամանքը՝ ցանկալի կլիներ, եթե այն հրատարակվեր երկու հատորով՝ մեկ, ծանրակշիռ հատորով առաջացող անհարմարությունից խուսափելու նպատակով: Այն ավելի դյուրին կդարձներ այս մեծածավալ ուսումնասիրության ընթերցումը:

Անշուշտ, կատարվել է հսկայական ու շնորհակալ աշխատանք թե՛ հեղինակի և թե՛ արաբերեն այս հրատարակությունն իրագործող մյուս անհատների ու կառույցների կողմից: Ցանկալի կլիներ, որ կոթողային այս աշխատանքը լույս տեսներ նաև Հայաստանում՝ հայերեն թարգմանությամբ:

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ